«Grassroots» մշակութային դրամաշնորհային աջակցության ծրագիր ՖՏ 2022
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների պահպանման կենտրոնում պահպանման սարքավորումների տեղադրման ծրագրի ստորագրման արարողությունը

2023 թվականի մարտի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ռուբեն Սևակի թանգարանում «Grassroots» մշակութային դրամաշնորհային աջակցության ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների պահպանման կենտրոնում պահպանման սարքավորումների տեղադրման ծրագրի ստորագրման արարողությունը:

Արարողությունը տեղի ունեցավ դեսպան ՖՈՒԿՈՒՇԻՄԱ Մասանորիի, Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի, ՀԲԸՄ հիմնադրամ Հայաստանի գլխավոր տնօրեն պարոն Վազգեն Յակուբյանի և Հոգեշնորհ Տեր Ասողիկ աբեղա Կարապետյանի ներկայությամբ:

Մինչև 90,767 ԱՄՆ դոլարի չափով Ճապոնիայի դրամաշնորհային մշակութային աջակցության ծրագիրը նպատակ ունի նպաստել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում պահվող մշակութային ժառանգության պահպանմանն ու վերականգնմանը: Ծրագիրը հատուկ ուղղված կլինի թանգարանների պահպանման բաժնի համար անհրաժեշտ սարքավորումների տեղադրմանը: Ներկայումս պահվող մշակութային գործերի պահպանումից և վերականգնումից հետո ավելի շատ արվեստի գործեր հասանելի կդառնան հանրությանը և կարող են ցուցադրվել: Այս Ծրագիրը նաև կնպաստի փորձագետների վերապատրաստմանը, մշակույթի և ավանդույթների վերաբերյալ կրթական փորձի խթանմանը, ինչպես նաև կավելացնի թանգարաններ այցելող մարդկանց թիվը Մայր Տաճար այցելության ժամանակ, որը գրանցված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում:

Արարողության ընթացքում հոգեշնորհ Տեր Ասողիկ աբեղա Կարապետյանը ողջունեց հյուրերին՝ իր երախտագիտությունը հայտնելով Ճապոնիայի կառավարությանը և դեսպանատանը, որից հետո դեսպան Ֆուկուշիման և պարոն Յակուբյանը հանդես եկան ելույթներով՝ մաղթելով ծրագրի հաջող իրականացում: Գեղեցիկ ելույթ ունեցավ Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, ով կարևորեց հայ և ճապոնացի ժողովուրդների սերն ու հարգանքը մշակույթի նկատմամբ, և երկու ժողովուրդներին միավորող խորհրդանիշները՝ Արարատ և Ֆուջի լեռները, ծիրանի և սակուրա ծառերը:

Ելույթներից հետո դեսպան Ֆուկուշիման և պարոն Յակուբյանը ստորագրեցին դրամաշնորհի պայմանագիրը որպես կողմեր, իսկ Տեր Ասողիկ քահանա Կարապետյանը՝ որպես վկա:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Պարոն Յակուբյանի ելույթը

Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը դեսպան Ֆուկուշիմայի և պարոն Յակուբյանի միջև

Դեսպան Ֆուկուշիման, պարոն Յակուբյանը, Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը և Հայր Ասողիկ Կարապետյանը

Դեսպան Ֆուկուշիմայի հարցազրույցը

Արարողության մասնակիցների աղոթքը

Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը և դեսպան Ֆուկուշիման